ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 մայիս, 2019 թվականի № 19-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԸԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 52-Լ ՈՐՈՇՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 52-Լ որոշման № 2 հավելվածը փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված Տեխնիկական միջոցների ձեռքբերման և տեղակայման աշխատանքների նախահաշվին՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:

3. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի իրականացումից բխող դրամական մուտքերն ու ելքերը և եկամուտներն ու ծախսերը՝ հաստատել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշմամբ հաստատված Ընկերության եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի, եկամուտների և ծախսերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 4 և դրամական հոսքերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 5 հավելվածի:

4. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

5. Սույն որոշման 1-ին կետով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել 2019 թվականի հունիսի 1-ից, բայց ոչ շուտ, քան սույն որոշման ընդունման մասին համապատասխան անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել ոչ շուտ, քան սույն որոշման ընդունման մասին համապատասխան անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

15 մայիս, 2019 թվականի

ք. Երևան